ՆԱՍԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

ԱՍԱՏՐՅԱՆ Է. Տ.

Եգիպտոսը մերձավորարևելյան և հյուսիսաֆրիկյան տարածաշրջանի ամենահանգուցային երկրներից մեկն է, որը մեծ կշիռ ու հեղինակություն է ունեցել արաբական աշխարհում նաև պատմության նոր և նորագույն շրջանում: Եգիպտոսում տեղի ունեցած սոցիալական, քաղաքական և մշակութային իրադարձություններն իրենց ազդեցությունն են թողել արաբական իսլամական երկրներում տեղի ունեցած գործընթացների վրա: Եգիպտոսն առաջիններից էր, որտեղ XIX դարի սկզբներին ձևավորվեց արաբական երկրների նոր շրջանի պատմության ամենանշանակալից իրադարձություններից մեկը՝ արաբական ազգային-մշակութային զարթոնքը՝ Նահդան: XIX դարի վերջերից մինչև XX դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածում Եգիպտոսն արաբական աշխարհում սկզբնավորված հակագաղութային և հակասիոնիստական շարժումների ամենակարևոր կենտրոններից մեկն էր, որտեղ 1952 թ. հուլիսին «Ազատ սպաների» իրականացրած հեղափոխության շնորհիվ տապալվեց միապետությունը: 1953 թ. հունիսի 18-ին Եգիպտոսը հռչակվեց անկախ հանրապետություն:

1956-1970 թթ. Եգիպտոսի նախագահը «Ազատ սպաների» ամենաէական դեմքերից մեկն էր՝ զինվորական գործիչ Գամալ Աբդել Նասերը, որի անվան հետ են կապված Եգիպտոսի պատմությանն առնչվող մի շարք հանգուցային իրադարձություններ: Արտաքին դաշտում արժանահիշատակ են Եգիպտոսի մերժողական դիրքորոշումը Բաղդադի պակտին, 1958 թ. Սուեզի ճգնաժամը և «Եռյակ ագրեսիան», Եգիպտոսի ու Սիրիայի միավորմամբ Արաբական Միացյալ Հանրապետության ստեղծումը (1958-1961 թթ.), Եգիպտոսի արտաքին քաղաքականության կողմնորոշումը դեպի ԽՍՀՄ և առճակատումը Արևմուտքի ու արևմտյան կողմնորոշում ունեցող արաբական պետությունների հետ, շարունակական հակագդեցությունը Իսրայելին և այլն: Ներքին քաղաքականության ոլորտում հիշատակման արժանի են սոցիալ-տնտեսական, այդ թվում՝ ագրարային բարեփոխումները, որոնք ուղեկցվեցին օտար, իսկ հետագայում՝ եգիպտական խոշոր կապիտալի ազգայնացմամբ, արաբական սոցիալիզմի եգիպտական ուղղության ձևավորումը, քաղաքական ազատությունների սահմանափակումները, նաև հետևողական պայքարը կրոնաքաղաքական շարժումների, մասնավորապես «Մուսուլման եղբայրների» դեմ:

Հատկանշական է, որ Նասերը մեծ նշանակություն էր տալիս արաբական միասնության և համերաշխության, նաև սոցիալական արդարության գաղափարներին: Նա կայսերապաշտության, գաղութատիրության և սիոնիզմի դեմ կոշտ պայքարի կողմնակից էր: Նրա առաջ քաշած գաղափարները, որոնք իր ժամանակին լայն ժողովրդականություն էին վայելում, հայտնի են նասերականություն անվամբ: Նասերականությունը տարողունակ հասկացություն է, քանի որ առնչվում է սոցիալական, հասարակական և քաղաքական ոլորտներին: Այլ խոսքով՝ նասերականությունը ոչ միայն Եգիպտոսի, այլև արաբական ազգի միասնական և արժանապատիվ ապրելու Նասերի բանաձևն էր:

Գամալ Աբդել Նասերը, գալով իշխանության, փորձեց գործնականում իրականացնել իր առաջ քաշած թեզերը: Օտար ընկերությունների, առաջին հերթին Սուեզի ջրանցքի անգլո-ֆրանսիական կազմակերպության ազգայնացմամբ Նասերն ապացուցեց, որ մինչև վերջ պայքարելու է գաղութատիրության դեմ: Մյուս կողմից, հասարակության բարեկեցությանը և համահավասարությանը միտված սոցիալ-տնտեսական բարեփոխումները նպատակ ունեին ստեղծել հզոր ու մրցունակ եգիպտական պետություն, որը կարող էր ձգտել տարածաշրջանային գերակայության:

1961-1967 թթ. Եգիպտոսի զարգացման երկրորդ փուլը միտված էր սոցիալիստական հասարակության կառուցմանը[1]: Նասերի սոցիալիզմը, ի դեպ, աղերսներ չուներ կոմունիզմի հետ, որը դիտարկվում էր որպես արաբների ավանդույթներին հակասող գաղափարախոսություն: Սոցիալիզմը գաղափարական առումով միանգամայն նոր իրողություն էր Եգիպտոսի համար: Պատահական չէ, որ Նասերն իր ելույթներում փորձում էր հիմնավորել սոցիալիզմի ներդրման անհրաժեշտությունը՝ նշելով, որ այն չի կարող հակասել իսլամին, քանի որ առաջ է քաշում սոցիալական արդարության գաղափարներ, ինչը անում է նաև իսլամը[2]:

Առանձնապես ուշագրավ են արաբական միասնության, համերաշխության և առհասարակ պանարաբիզմի վերաբերյալ Նասերի գաղափարները, որոնց հիմքում «արաբական ազգ» և «արաբական հայրենիք» հասկացություններն են: Գաղափարներ, որոնց մասին արաբները պատկերացում չունեին ընդհուպ XIX դարը, եթե նկատի ունենանք, որ օսմանյան չորսդարյա տիրապետության շրջանում

---

[1] **Հովհաննիսյան Ն.,** *Արաբական երկրների պատմություն, հ. III, Ե., 2006, էջ 278-283:*

[2] *Տե՛ս* **Anouar Abdel-Malek,** *Nasserism and Socialism, http://www.socialistregister. com/index.php/srv/article-/viewFile/5927/2823*

արաբական ինքնությունը մթագնված էր[3]: Արաբական ազգայնականությունը սկիզբ առավ միայն XIX-XX դարերում եվրոպական ազգայնականության անմիջական ազդեցությամբ և կապված էր նաև արաբական ազգային մշակութային զարթոնքի՝ Նահդայի հետ, որը նպաստեց արաբական ինքնության վերելքին[4]: Հետագա տարիներին՝ մինչև նասերականության սկիզբը, արաբական ազգայնական տեսություններն աչքի են ընկել գաղափարախոսական տարաբնույթ շեշտադրումներով ու աշխարհագրական լայն ընդգրկումներով: Նրանց գործունեությունը սկզբնական շրջանում կապված է եղել Օսմանյան կայսրության կազմում արաբների ազ-գային իրավունքների առաջքաշման հետ[5]:

Կայսրության փլուզումից և եվրոպական գաղութատիրության հաստատումից մինչև Երկրորդ աշխարհամարտն ընկած ժամանակահատվածը արաբական ազգայնական շարժումները որակական առումով նոր փուլ թևակոխեցին: Դրանցից ամենահանգուցայինը 1947 թ. ստեղծված Բասան էր՝ Արաբական սոցիալիստական վերա-ծննդի կուսակցությունը, որը տարիներ անց իշխանության եկավ նախ Սիրիայում՝ 1963 թ., ապա Իրաքում՝ 1968 թ.: Արդեն XX դարի երեսնականներին սկսեց առանձնանալ արաբական ազգային՝ տեղային հայրենասիրությունը (local patriotism, regionalism), որի կողմնակիցները կարծում էին, որ յուրաքանչյուր արաբական երկիր պետք է զարգանա ինքնիշխան կերպով՝ ըստ իր առանձնահատկությունների և ավանդույթների[6]: Արաբ ազգայնական գործիչների շրջանում աստիճանաբար սկսվում էր մրցակցություն, նաև պայքար իշխանության գալու և առաջատար դիրքեր գրավելու հարցում:

---

[3] Միայն արաբական զարթոնքի՝ Նահդայի գործիչների քարոզներում է, որ կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ արաբներին միավորում է ընդհանուր պատմությունը, փառահեղ անցյալը, լեզուն, մշակույթը և կրոնը: Նշենք, որ միջնադարում ևս արաբները չեն ունեցել շեշտված արաբական ինքնություն, քանի որ ցեղային ինքնությանն անմիջապես փոխարինելու եկան մուսուլմա-նական ինքնությունը և պատկանելությունը Ումմային, իսկ XVI դարից արաբները հայտնվեցին Օսմանյան կայսրության կազմում՝ հետքայլ կատարելով իրենց քաղաքակրթական ձեռքբերումներից:

[4] Մանրամասն տե՛ս **Նաջարյան Ե.,** *Արաբական ազգային-մշակութային զարթոնքը՝ Նահդան, Ե., 1988:*

[5] Տե՛ս **Գասպարյան Ա.,** *Արաբ ազգայնականները և երիտթուրքերը. Համագործակցությունից առճակատում, Ե., 2016:*

[6] Ռեգիոնալիզմի ակնառու օրինակ է լիբանանցի հասարակական-քաղաքական գործիչ Անտուն Սաադեի Մեծ Սիրիայի նախագիծը: 1932 թ. Ա. Սաադեն հիմնում է Սիրիական սոցիալ-ազգայնական կուսակցությունը, որի անդամներն ու համախոհները հայտնի էին «դոմի սուրիյուն» (սիրիական ազգայնականներ) անունով: Մանրամասն տե՛ս **Labib Zuwiyya Yamak.** *The Syrian Social Nationalist Party: An Ideological Analysis. Center for Middle Eastern Studies of Harvard University, 1966.*

Սերտորեն կապված լինելով արաբական ազգի միասնության ու համերաշխության գաղափարների հետ՝ նասերականությունը կարելի է դիտարկել թե՛ արաբական ազգայնականության, թե՛ պանարաբիզմի ընդհանուր խորապատկերի մեջ: Բացի այդ, Նասերի օրակարգում հանգուցային նշանակություն էր տրվում արաբ-իսրայելական հակամարտությանն ու պաղեստինյան հարցին: Եգիպտոսը Նասերի իշխանության գալուց հետո առանձնանում էր որպես Իսրայելին հակազդող ամենագործուն արաբական երկրներից մեկը[7]:

Նասերականությանը նոր լիցքեր հաղորդեց նաև Արաբական Միացյալ Հանրապետության ստեղծումը՝ 1958 թ. Եգիպտոսի և Սիրիայի միավորումը, որը Եգիպտոսի նախաձեռնությունն էր[8]: Ուշագրավ է, որ Եգիպտոսը Նասերի օրոք նախապատվությունը տվեց երկրի արաբական ինքնությանը՝ ստորադասելով աֆրիկյան և իսլամական բաղկացուցիչները, թեև Նասերը համարվում է նաև Չմիացող երկրների շարժման առաջատար գործիչներից ու հիմնադիրներից մեկը[9]: Նասերի պատկերացմամբ՝ եգիպտացիներին արաբական աշխարհի հետ կապում է պատմական ընդհանրությունը, ընդհանուր դավանանքը, շահերը, մյուս կողմից՝ ընդհանուր աղետները: Նրանց առջև ծառացած են նույնանման խնդիրներ, նույնն է նրանց հեռանկարը, անգամ թշնամին՝ թեպետ տարբեր կերպարներով, ի վերջո՝ արաբական երկրները կազմում են աշխարհագրական միասնություն[10]:

Արաբական ժողովուրդների ներկային և հեռանկարին անդրադառնալիս Նասերը կարևորում էր գաղութատիրության վերացումը, քանի որ այն մշտական սպառնալիք էր եգիպտական և արաբական ժողովուրդների նվաճումներին: Կայսերապաշտության դեմ պայքարը կանխորոշեց Նասերի մարտավարությունն արտաքին քաղաքականության ոլորտում: Եգիպտոսի հարաբերությունները բավական լարված էին թե՛ ԱՄՆ-ի, թե՛ Արևմուտքի հետ, որոնք փորձում էին տարածաշրջանի իրենց դաշնակիցների, մասնավորապես աստվածապետություն

---

[7] *Նշենք, որ Եգիպտոսն արաբ-իսրայելական հակամարտության գործուն անդամ էր, մասնակցել էր 1948-1949 թթ. արաբ-իսրայելական առաջին պատերազմին, որից հետո Եգիպտոսին էր անցել Պաղեստինի Գազայի շրջանը: Եգիպտոսի դեմ «Եռյակ ագրեսիան» շատ դեպքերում համարվում է արաբ-իսրայելական երկրորդ պատերազմը, երբ Անգլիան և Ֆրանսիան Իսրայելին վերապահեցին առաջինը Եգիպտոսին հարվածելու «պատիվը»:*

[8] *Տե՛ս* **Elie Podeh.** *The Decline of Arab Unity: The Rise and Fall of the United Arab Republic, Sussex Academic Press, 1999.*

[9] *Non-Aligned Movement and Egypt: The Nasser Era, http://shodhganga.inflibnet. ac.in/bitstream-/10603/17016/8/08_chapter%203.pdf*

[10] **Գամալ Աբդել Նասեր,** *Հեղափոխության փիլիսոփայությունը, Կահիրե, 1955, էջ 91-110 (արաբերեն):*

համարվող Սաուդյան Արաբիայի միջոցով աշխարհիկ արաբական ազգայնականությանը հակազդել իսլամական համերաշխության և միասնության գաղափարներով, որին Նասերը դեմ էր արտահայտվում[11]:

Նա կոչ էր անում արաբներին միասնության թե՛ գործողությունները համա-կարգելու, թե՛ քաղաքական ու տնտեսական ինտեգրման առումով, որը պետք է նպաստեր առաջընթացին ու զարգացմանը, արաբների մեկ բռունցք դառնալուն: 1958 թ. իր ելույթներից մեկում արաբների համար ամենակարևորը Նասերը համարում է իջման՝ համաձայնությունը[12]: Կարելի է ասել, որ 1950-ականների վերջերին պանարաբիզմը արաբական աշխարհի ամենալայն հեղինակություն վայելող գաղափարախոսությունն էր, որի անվերապահ առաջնորդը Գամալ Աբդել Նասերն էր[13]:

Պատմական ընթացքը, սակայն, ցույց տվեց, որ արաբական երկրների միջև գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման անհամաչափություններն ու բևեռացումը անհնար էր հաղթահարել: Արաբական միասնությունը գործնական դաշտում չկարողացավ դիմանալ պատմության քննությանը և բազմաթիվ ձախողումներ ունենալով՝ ապացուցեց իր անկենսունակությունը: Ասվածի ապացույցներից էր նաև 1961 թ. Արաբական Միացյալ Հանրապետության փլուզումը: Մեկ տարի անց Նասերն ակտիվորեն ներգրավվեց Եմենի քաղաքացիական պատերազմում (1962-1970 թթ.)՝ հակամարտության մեջ մտնելով Սաուդյան Արաբիայի հետ, որը պաշտպանում էր թագավորական ուժերին[14]:

Նասերականությանն ուղղված լրջագույն հարված էր նաև 1967 թ. Իսրայելի հետ պատերազմում Եգիպտոսի և արաբների պարտությունը՝ ոչ միայն հողային, այլև բարոյական կորուստները[15]: Պատերազմն ի ցույց դրեց Եգիպտոսի խոցելի կողմերը: Բացի այդ, իշխանության վերջին տարիներին Նասերը ավելի ու ավելի էր կախվածության մեջ ընկնում Ծոցի նավթարդյունահանող արաբական երկրների ֆինանսական հատկացումներից: 1969 թ. նա նույնիսկ ընդառաջ գնաց սաուդյան Ֆահդ թագավորի առաջարկությանը, որպեսզի Եգիպտոսը մասնակցի Իսլամական

---

[11] **Փաշայան Ա.,** *Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը. նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ, Ե., 2003, էջ 32:*

[12] **Левин З.** *Развитие арабской общественной мысли, М., 1984, с. 46.*

[13] **Dawisha, Adeed,** *Arab Nationalism in the Twentieth Century: From Triumph to Despair, Princeton, 2009, p. 184.*

[14] **Jesse Feris.** *Nasser's Gamble: How Intervention in Yemen Caused the Six-Day War and the Decline of Egyptian Power, Princeton, 2013.*

[15] *Եգիպտոսը պատերազմի հետևանքով կորցրեց Սինայը, Իսրայելին հաջողվեց գրավել նաև Գազայի շրջանը, Արևմտյան ափը, Արևելյան Երուսաղեմը, Գոլանի բարձունքները:*

կոնֆերանս կազմակերպության հիմնադիր համագումարին, որը տեղի ունեցավ Ռաբաթում իսլամական համերաշխության շարժման շրջանակներում[16]: Պատահական չէ, որ Նասերի հրամանով Կահիրեում կասեցվեց նաև արաբական ազգայնական արմատական ուղղվածությամբ «Արաբների ձայնը» ռադիոհաղորդումների հեռարձակումը[17]:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ նասերականությունը սոցիալ-քաղաքական հայեցակարգ էր՝ հիմնված Գամալ Աբդել Նասերի գաղափարների ու հայեցակարգային դրույթների վրա: Այն առաջ էր քաշում թե՛ արաբական ազգայնականության, թե՛ պանարաբիզմի աշխարհիկ գաղափարներ, կողմնակից էր սոցիալիզմին և հանրապետական մոդելին, աչքի էր ընկնում շեշտված հակակայսերապաշտական և հակազաղութատիրական ձախակողմյան ուղղվածությամբ: Ի տարբերություն բաասիզմի, որն ուներ մի քանի տեսաբաններ ու հստակ հայեցակարգ, նասերականությունը համակարգված գաղափարախոսություն չէր, այլ ներկայացնում էր Եգիպտոսի արտաքին ու ներքին քաղաքական դաշտում ձևավորված մի շարք խնդիրների ու մարտահրավերների այն պատասխանները, որոնք փորձում էր գտնել Նասերը նորանկախ Եգիպտոսը կառավարելու համար: Հաճախ Նասերն ինքն էլ չէր տիրապետում արդյունավետ կառավարման մեխանիզմներին, որը հանգեցնում էր սխալների: Ամեն պարագայում, նա փորձում էր սոցիալ-տնտեսական և քաղաքական բարեփոխումների միջոցով համախմբել ազգը ընդհանուր գաղափարների շուրջ: Այդ իմաստով նասերականությունը տարբերվում էր Բաասից, որը ձևավորվել ու զարգացել էր նախքան իշխանության գալը՝ որպես կուսակցական կառույց: 1962 թ. Նասերը հիմնեց Արաբական սոցիալիստական միություն (ԱՍՄ) անունով մի կուսակցություն, որը դարձավ նրա քաղաքական հենարանը, երկրի միակ քաղաքական ուժը: Սակայն նասերականությունը տարածվեց մի շարք արաբական երկրներում (Սիրիա, Իրաք, Հորդանան, Լիբանան, Սաուդյան Արաբիա, Հյուսիսային Եմեն, Հարավային Եմեն)՝ վերաճելով կուսակցական կառույցի: Արդեն Նասերի մահից մի քանի տարի անց արաբական երկրներում գործող նասերական միությունները սկսեցին աստիճանաբար վերանալ: Բացառություն էր 1950-ականների վերջերին Լիբանանում հիմնված ձախակողմյան անկախ նասերականների շարժումը, որն առավել հայտնի է Մուրաբիտուն անունով[18]: Միայն 1992 թ.՝ Եգիպտոսում Նասերի մահից տասնամյակներ անց,

---

[16] **Փաշայան Ա.,** *նշվ. աշխ., էջ 38-39:*

[17] **Adeed Dawisha.** *Requiem for Arab Nationalism, Middle East Quarterly, Winter 2003, pp. 25-41.*

[18] *Lebanon-Al-Mourabitoun, https://www.justice.gov/sites/default/files/pages/attachments/2015/09/30/lbn36334.pdf.*

հիմնվեց ԱՍՄ-ի ժառանգորդ Արաբական դեմոկրատական նասերական կուսակցությունը, որն աչքի չընկնող քաղաքական ուժ է[19]:

Հատկանշական է, որ Նասերին հաջորդած Անվար Սադաթը, գալով իշխանության, միանգամայն փոխեց Եգիպտոսի զարգացման ընթացքն ու արտաքին քաղաքական ուղենիշները[20]: Նասերականությունն անցավ պատմության գիրկը:

Ամեն պարագայում, չնայած որոշ ձախողումների, Նասերի օրոք հատկապես գաղութատիրության և արաբ-իսրայելական համընդհանուր պայքարի մեջ Եգիպտոսն իր վճռորոշ ներդրումն ունեցավ, որի համար Նասերը թանկ գին վճարեց՝ մշտապես լինելով Արևմուտքի ճնշումների տակ: Ոչ պակաս կարևոր էր Նասերի դերն արաբական ազգայնականության, արաբական միասնության և ընդհանրապես պանարաբիզմի գաղափարական դաշտի ձևավորման հարցում: Ըստ այդմ՝ Երկրորդ աշխարհամարտից հետո ձևավորված արաբական անկախ պետություններն իրենց սահմանադրություններում սկսեցին ամրագրել այն դրույթը, որ արաբական երկրները պատկանում են միասնական արաբական հայրենիքին, իսկ նրանց բնակչությունը արաբական ազգի մի մասն է՝ անկախ քաղաքական, տնտեսական, աշխարհագրական, սոցիալական և դավանական տարանջատվածությունից[21]: Փաստորեն, XX դարում հնարավոր եղավ սահմանել արաբական ազգ հասկացողությունն ու նրա տեսլականը, որն աստիճանաբար սկսեց հարստանալ նորանոր գաղափարական լրացումներով:

Նասերի մահից հետո արաբական աշխարհում աստիճանաբար անկում ապրեց նաև աշխարհիկության այն առաջադեմ մթնոլորտը, որին կողմ էին Նասերն ու նրա բազում համախոհներ՝ իր տեղը զիջելով զարգացման կրոնական ուղուն և արաբական հասարակությունների հարաճուն կրոնականացմանը: Ընդհանրապես, արաբական երկրներում աշխարհիկության նահանջն ըստ ամենայնի կապված է արաբական հասարակություններում խոր արմատներ ունեցող պահպանողական ու կրոնական ավանդույթների, ցեղային ու կլանային համակարգի տարրերի, ինչպես նաև կարծրատիպային ու կրոնամոլ աշխարհընկալումների հետ, որոնք փաստացիորեն խոչընդոտում են արդիականացմանը:

---

[19] *A Partial Guide to the Egyptian Political Parties, https://connectedincairo.com/ 2011/11/15/a-partial-guide-to-the-egyptian-political-parties/.*

[20] **Փաշայան Ա.,** *Եգիպտոսը արդի պատմության զիգզագներում, http://middle orient.com/?p=4465*

[21] *The Arab world: past, present, and future by Izzeddin, Nejla Mustapha, Chicago, H. Regnery Co., 1953, p. 31.*

НАССЕРИЗМ: ТЕОРИЯ И ФУНКЦИЯ

АСАТРЯН Э. Т.

Резюме

Доктрина была основана на социально-политических воззрениях и идеях президента Египта Гамаль Абдель Нассера (1956-1970гг.). В отличие от баасизма, нассеризм не имел одного или нескольких идеологов, напротив, он возник как комплекс практических мер, нацеленных на построение Нассером сильного египетского государства, завоевание политической и экономической независимости. Стартовав как панарабский национализм, нассеризм постепенно эволюционировал в арабский социализм. Не приемля идеологии западного капитализма и колониализма, идеи арабского социализма Нассер противопоставлял также и коммунизму, отмечая несовместимость последнего с арабскими традициями.

В 1950-60-ые годы нассеризм являл собой одну из самых популярных и мощных политических идеологий в арабском мире, став особо актуальным после Суэцкого кризиса 1956 г., политический исход которого ознаменовал победу нассеризма над западными империями. Однако распад ОАР в 1961г., а также поражение арабов в Шестидневной войне негативно сказались как на политическом положении Нассера, так и идеологии нассеризма.

NASSERIZM: THEORY AND FUNCTION

E. ASATRYAN

Abstract

The paper deals with the theory and practice of Nasserism, which was a socio-political doctrine based on the thoughts and actions of Gamal Abdel Nasser, president of Egypt (1956-1970). Unlike Baathism, Nasserism was not a well-conceived thesis by one or more ideologues, but emerged as an ideology out of a series of practical responses to the problems, domestic and foreign, that Egypt, ruled by military officers from 1952 onward, faced as it tried to consolidate its newly won political and economic independence. Beginning a pan-Arab nationalism, it evolved into Arab socialism. Though opposed ideologically to Western capitalism and colonialism, Nasser's interpretation of Arab socialism developed as a rejection of communism, which was seen as incompatible with Arab traditions. In the 1950s and 1960s, Nasserism was amongst the most popular and potent political ideologies in the Arab world. This was especially true following the Suez Crisis of 1956 the political outcome of which was seen as a validation of Nasserism, and a tremendous defeat for Western imperial powers. The collapse of the United Arab Republic of 1961, as well as the Arab defeat in the Six-Day War of 1967, damaged the standing of Nasser, and the ideology associated with him.